

**ՔԱՐ ՈՒ ԱՆՍԻՐՏ ՄԵՐ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),
Լոռու բարբառ (խոսվածք)**

Մի թագավոր ա ըլել, դա իրա վազիր-վզիրը վեր ա կալել, գնացել ա ջրի դրադը, տեհիլ ա, որ ջուրը իրեք խանի գլուխ ա բերում, հենց ասիլ ա իրա վազիր-վզիրներին.— Գլխները ջրից հանեցեք:

Մզրախովը մի գլխին տվել ին, նի չի մտել:

Թագավորն ասել ա.— Գցեք ջուրը:

Մեկ էլ տվել են հենց անց ա կացել գլխից:

Ասիլ է.— Էդ էլ զցեցեք ջուրը:

Մեկին էլ են տվել, գլխի կեսն ա մնացել:

Թագավորն ասել ա.— Էս գլուխը վերցրեք տանենք տուն:

Որ տանում են տուն, նազրներն ասում են.— Թագավորն ապրած կենա, ի՞նչ հսկացար, որ արիր:

Թագավորն ասել ա.— Որ խելոք զրիցն արին, գլխի էս կուանը տվել են ու էն կոնիցը դուս ա իկել, գլխումը չի մնացել: Մեկն էլ ասել են՝ Խակի գլխումը չի մտել— էն էլ են զցիլ ջուրը: Ամա էս ա որ կես տեղն ա մնացել, ինչ որ ասել են, գլխու մեջն ա մնացել:

Թագավորի կնիկը մահացել ա, թագավորը գնացել ա ուրիշ տեղ: Հետո մի ջադու պառավ էկիլ ա թագավորի թագա կնկա կուշտը, ասել ա.— Էդ իրա ծերքի կնկա գլուխն ա, եթե էտա չի ըլի քեզ հետ թագավորը շատ լավ կըլի:

Թագավորը ունենում ա մի տասը տարեկան աղջիկ:

Թագավորի թագա կնիկը ջադուին ասում ա.— Բա գլուխն ի՞նչ պետք է անենք:

Ջադուն ասեց.— Պեչքը քցի էրի ու տար քամուն տուր:

Թագավորի կնիկը էրեց ու տվուց աղջկան, աղջիկն էլ տարավ քաման տվուց: Քամին էն քողիցը քցեց աղջկա պերանը, ընդուց էրկուհոքիսացավ, հենց վերջ էկավ, ազատվեց տղա էլ պիրեց:

Որ թագավորն էկավ, առաջ գնացին ասին.— Աչքդ լիս, աղջիկդ տղա ա պիրել:

Թագավորն ասաց.— Գնալու հատադ գնամ գլուխը տամ, ես ազարը քողել եմ ու գնացել, ինչու ա տղա պիրել:

Աղջիկն ասեց.— Թագավորն ապրած կենա, կաց մի բան կասեմ, էլի գլուխս տուր:

Ասեց թե.— Էն գլուխը որ պիրիլ էս, փլան ջադու պառավը ասավ, որ ձեր հին կնկա գլուխն է: Իմ մերացուս ասավ՝ բա ի՞նչ անեմ:

Ջադուն ասավ.— Պեչքը քցի էրվի ու տար քամուն տուր: Հենց քամին նրա քողիցը բերանս քցեց ու էնդուց էլ բահըմ էկավ, էրկուհոգիսացա, ու դուս էկավ մի տղա:

Թագավորը հավատաց, գլուխը տվուց ոչ, էն էրեխեն դառավ տաս տարեկան տղա: Հետո, որ էս էրեխեն գնաց իրանց բեխանց հետ խադ անելու, էնքան դուվաթ ուներ, որ հենց որի դոնիցը որ տվեց՝ կուռը պոկ էկավ, որին սիլլա տվեց՝ մահացավ:

Թագավորին ասին.— Թագավորն ապրած կենա, էրեխեղ մեր էրեխանց շատ վնասիլ ա, պետք է մենք քոչինք:

Էրեխեն մորն ասում ա.— Մայրիկ ջա՞ն, ժողովուրդը ոչ, մենք պետք է քոչինք:

Էրեխեն ու մերը վեր են կենում գնում: Գընում են տենում մի տըզի կեսի չափ էրկաթե տուն:

Տունն են մտնում ու տենում, որ տունը խազնեքով լիքն ա, ամեն մի պանն էլ դուզ ու տեղին ա: Տեսան տակինն էլ մի զերուզամբի կա: Մեր ու տղեն իրիկունը տեհան, որ օխտը դև դպա տուն

գալիս են, մեկը մի ծառ ա շլակել, մեկը մի պախրա շլակել, մեկը մի արջ ա շլակել: Մերը վախեց ու վեր կացավ ասավ.— Տղա ջան, մեր վերջն ա:

Տղեն ասեց.— Մայրիկ ջան, մի վախիլ, ես բատեղն եմ:

Դև տեհավ, որ էրկու իսան իրանց տուն են եկիլ:

Դնն ասեց.— Դուշն իրա թեսովը, օձն իրա պորտովը ըստի իկած չին, դու ինչ իսան իս, որ ըստի էկիլ իս:

Տղեն առաջ կանգնեց, ասեց.— Օխտն աղբեր չինք, ութն աղբեր ըլինք, կենտ-կենտ էկեք, զարզանդում ենք:

Ու թուրը վե կալավ դռան տակը մտավ, էկողի գլուխը տվուց՝ ընկավ զերուզամբին, էսպես վեցի գլուխն էլ տվուց ու ընկավ զերուզամբին: Են մինն էլ վրավուրդ արավ, հենց յարալու ընկավ զերուզամբու մեջը, ու տղեն գլխու չընգավ, թե յարալու ա:

Հետո տղեն ասեց.— Մայրիկ ջան, էս խազինեն էլ, էլ ահազին ապրուստը կուտինք, կկենանք չև մեր մահի օրը:

Հետո էս տղեն վե կացավ գնաց որսը: Մերը գնաց զերուզամբի գլուխը ասեց.— Դև, սախ է՞ս: Ասավ, որ.— Զա, սադ եմ:

Կնիկը յարալուն վի կալավ պերեց, դրան սղացրուց:

Դև սաղացավ, կնկա հետ լավ ծանոթացավ:

Հետո դեկին ասաց.— Ո՞նց անենք, որ տղեն գնա ու էլ հետ չգա:

Դնն էլ ասեց թե.— Դու հիվանդացի, ասա, որ անմահական խնձոր էս ուզում, դա կերթա ու էլ հետ չի գա:

Տղեն էկավ տեհավ, որ մերն հիվանդացել ա ու շատ դարդ արավ:

Մերը տղին ասեց.— Գնա անմահական խնձորը պեր, որ առողջանամ:

Տղեն գնաց, շատ գնաց, քիչ գնաց ու մի տեղը դոնախ ընկավ:

Ղոնախատերի անունը Կիրակի էր: Կիրակին ասավ.— Տղա ջան, ո՞ւր ես գնում:

— Անմահական խնձորի եմ գնում:

Կիրակին ձինն էլ, խուրջինն էլ, շուշեն էլ տվեց, որ անմահական ջրից մեջը լցնի:

Կիրակին ասաց տղին.— Բաղի չափառներից վախիս ոչ, բաղի չափառն օձ ա, կերթաս գելի ըղաքի խոտը վեր կուլիս դոչի ըղաքին կդնես, դոչի ըղաքի դմակն էլ՝ գիլի ըղաքին կդնես, շուշեն անմահական ջրից կլցնես, խուրջինն էլ անմահական խնձորից, որ դի կտան վախիս ոչ, մտիկ պտի շանես:

Մի մազ էլ տալիս ա տղին, ասում ա.— Բան ա, որ ջահիլություն անես մտիկ տաս, տենաս, որ գալիս են մաղը ծիսի՝ կրակ կդառնա ու հետ կդառնա օձը:

Տղեն վեր ա կենում ու գնում բաղը: Գնում ա դոչի ըղաքի դմակը վեր անում դնում ա գիլի ըղաքին, գիլի ըղաքի խոտը դնում դոչի ըղաքին ու մտնում բաղը:

Որ մտնում ա բաղը, ասում են.— Գե՛լ, տարա վ:

Գելն ասում ա.— Քանի տարին գել եմ, ես սոված եմ ապրում, ուղուց անջախ եմ գտել:

Ղոչն էլ ասում ա.— Էս քանի տարի դոչ եմ, սոված, ես խոտը անջախ եմ գտել, մենք էդ տղին չենք վնասիլ:

Անմահական ջուրը շուշեն է լցնըմ եդ տղեն, ու անմահական խնձորն էլ խուրջինն է լցնում եդ տղեն:

Զիու վրա ա զցում խնձորն էլ, շուրն էլ, ինքն էլ վեր ըլում ա ձին քշում ա դիա: Եղնուց շատ դի են տալի, էտուց տղեն եդ ա մտիկ անում, տենում ա, որ օձի չափառը գալիս ա: Տղեն աստված ա կանչում ու էն մաղը ծիսում: Հենց բոց ա տալի ըղաքին, օձը բոց ա դառնում ու էլ չի գա:

Տղեն գալիս ա Կիրակու տուն, էն գիշեր տղեն քնում ա:

Որ քնում ա, Կիրակին էն անմահական ջուրը ինքը վերցնում ա և իրան ջրիցը ածում շուշեն:

Անմահական խնձորն էլ եղ վերցուց, իրանց խնձորը խուրջինն ածեց:

Տղեն ռավոտը վեր կացավ ու գնաց մոր կուշտը: Մերը որ ետով դուս էլավ, տեհավ, որ տղեն հրեն եղ ա զալի:

Ասեց դեխն.— Տղես եղ ա զալի:

Դես մտավ զերուզամբին թաք կացավ:

Հետո տղեն եկավ, ասավ մերը.— Եղ ի՞նչ եղացար, դու բարով էկար, տղա ջան:

Մերը էս ջրիցն էլ խմեց, էն խնձորիցն էլ կերավ, ասեց.— Ուխայ, այ տղա ջան, մեզ էլ օլում չկա: Էլ եղ տղեն դուս էլավ:

Դեխն ասաց.— Էլ հնար չէլավ:

Դես ասավ.— Ասա՛, ա յ տղա ջա՞ն, քու դըվաթ որտե՞՞ն ա:

Տղեն իրիկուն, որ տուն ա զալիս, մերը հարցնում ա:— Այ տղա ջան, քու դըվաթ որտե՞՞ն ա:

Տղեն ասում ա:— Են հիմի սին նի դուս կաղնեմ, դու փետքաշը վրա տու:

Սին նի դուս կաղնում ա, փետքաշն էլ մերը վրա ա տալի:

Հիմի ասում ա:— Մայրի՞կ, դրադի, թափ տամ ինձ:

Տղեն որ թափ է տալի, օղերը պատին են դիպչում, փշրում:

Տղեն ասում ա:— Էլի չի ոտն արավ:

— Բա ի՞նչը ոտ կանի, տղա ջա՞ն,— ասում ա մերը:

— Մայրիկ ջա՞ն, երկու բիթս իրարու վրա դի ու դայիմ փթաթի:

Մերը տղի երկու բիթ իրարու վրա դնում ու լարով էլ փթաթում:

Տղեն, որ ձիգ ա տալի, որ պոկի լարը երկու բթի օսկոռումը մնում ա:

— Մայրիկ չի իլավ, եղ արա:

Մերը դեխն ձեն ա տալի:— Ի՞նչ ես անում, դուս արի:

Դեխն ասում ա:— Ի՞նչ անեմ:

Մերն ասում ա:— Հենց թուրը քաշի մանտր-մանտր կտորի:

Դեխն ասում ա:— Շատ էլ որ հնգորտանքս կտորել ա, ես դրան դիմիշ չեմ անիլ:

Մերը դեխ ձեռից թուրն առնում ա ու տղին կաղնած կտորում ա: Տղի ջանդակը ածում ա խուրջինն ու ձիի վրա զցում ու դրկում:

Չին արածելով զնում ա Կիրակու տուն:

Կիրակին դուս ա զալի, տեսնում ա խուրջինն, ասում ա:— Է՛յ վա՛յ, էյ վա՛յ, տղին բեթարափ են արել:

Չիու վրից խուրջինը վեր ա բերում, տենում ա, որ տղի ջանդակը խուրջինումն ա, խալիշն փորում ա, անմահական ջուրը բերում խալիշու վրա բմբլումով ցրցնում ա, էն տղի ջանդակը բերում խալե-խալե խալիշու վրեն շինում, անմահական ջրեն քսում, հետո էլ անմահական ջուրը բերանն ա լցնում ու փշում:

Հենց որ փննշում ա, տղանում ու վեր ա կենում:

— Օ ֆ, օ ֆ,— ասում ա,— Կիրակի, ի՞նչ շատ քնել եմ:

Կիրակին էլ ասում ա:— Լավ քնել ես, ամա մի միտքն արա...

Միտքն ա անում, ամեն մի բանն էլ տենում ա, թե ինչեր են եկիլ զիսուն:

Տղեն էլի վեր ա կենում ու գնում մոր կուշտը:

Մերն ասում ա:— Էղ որ տեղ իր կորել, տղա ջան, շատ կարոտել ի:

— Մայրիկ ջա՞ն, քու ամեն բանն էլ միտս ա:

— Դե՛յ, — ասում ա տղեն, — դուս արի, դու որ դմիշ չարիր ինձ կտորես, ես ու դու կլնինք

ախալեր: Դե մորս կապի սնիցը, կտրատի:

Դեղ սնից կապում ա մորը ու թրով կտրատում ա: Դևն ու տղեն դառնում են ախալեր: Ասծանե իրեք խնձոր վեր ընկավ, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ դուզ խոսողին: